ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ

ԹԻՎ 1

ԵՐԵՎԱՆ – 2017

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունվարին

%

	2017թ. հունվարը	
	2016թ. դեկտեմբերի նկատմամբ	2016թ. հունվարի նկատմամբ
Սպառողական գների ինդեքս- ընդամենը	102.6	99.4
այդ թվում՝		
Սպառման ապրանքներ	104.2	99.9
Պարենային ապրանքներ	107.4	101.7
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.1	101.4
Ոչ պարենային ապրանքներ	99.4	96.5
Ծառայություններ	99.3	98.2

Սպառողական գներ: 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 2.6% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային ապրանքների 7.4% գնաճով: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում աճել են 6.7%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում և ծառայությունների ոլորտում գրանցվել է գների և սակագների՝ համապատասխանաբար 0.6% և 0.7% նվազում:

Սպառողական գների հավելաճը 2008-2017թթ. հունվարին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%



2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.4%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 96.5%, ծառայությունների սակագներինը՝98.2%:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է սպառողական գների 2.3-3.8% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 2.4%-ով:

Պարենային ապրանքների գներ: 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 7.4% գնաճ, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել մրգի՝ 10.9%, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի 49.0% գնաճը: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 8-ում նշված ժամանակահատվածում գրանցվել է 0.1-49.0% գնաճ, մեկում՝ 0.2% գնանկում, իսկ 4-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում[1] 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ արձանագրվել է 10.6%, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝49.0% գնաճ:

2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սնկի՝ 1.1%, սխտորի՝7.6%, ճակնդեղի՝ 13.7%, կարտոֆիլի՝ 16.6%, գլուխ սոխի՝ 18.0%, գազարի՝ 20.0%, բողկի՝28.8%, վարունգի՝35.4%, կաղամբի՝ 35.5%, կանաչ պղպեղի՝ 52.8%, սմբուկի՝ 63.2%, լոլիկի՝ 1.9 անգամ, խառը կանաչեղենի՝ 2.0 անգամ, կանաչ սոխի 2.2 անգամ գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գներն աճել են 44.7-64.2%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ աճել է 44.8%-ով:

Մրգի ապրանքախմբում[1] 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ արձանագրվել է 19.4%, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝ 10.9% գնաճ: Վերջինիս մեծապես նպաստել է խաղողի՝6.2%, ադամաթզի՝ 11.0%, կիտրոնի՝ 11.5%, ընկույզի միջուկի՝ 11.9%, խնձորի՝ 12.0%, տանձի՝ 14.6%, նռան՝ 19.6%, մանդարինի՝35.6%, արքայանարնջի 52.9% գնաճը: Դրան զուգընթաց, 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է չամիչի 3.9% գնանկում, իսկ նարնջի գինը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում մրգի գներն աճել են 5.9-17.4%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գավառում: Մայրաքաղաքում արձանագրվել է մրգի 9.6% գնաճ:

2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 36.5%: Վերոհիշյալ ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 8.01% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 2.9 տոկոսային կետով:

Ձվի հանրապետական միջին գինը 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ աճել է 1.3%-ով, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝ 2.8%-ով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ ձվի գինն աճել է 0.2-8.3%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում ձվի գինն աճել է 2.5%-ով:

Կենդանական և բուսական յուղերի ապրանքախմբում 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ գրանցվել է 0.1% գնանկում, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝0.7% գնաճ: Վերջինս հիմնականում կարագի 1.7% գնաճի արդյունք է:

Շաքարավազի հանրապետական միջին գինը 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ աճել է 15.0%-ով, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.6%-ով: Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է շաքարավազի 0.2-0.9% գնաճ, 3-ում՝ 0.2-0.1% գնանկում, իսկ 2-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում շաքարավազի գինն աճել է 0.8%-ով:

Մսամթերքի ապրանքախմբում 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ գրանցվել է 1.4% գնանկում, իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ՝0.2% գնաճ: 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է թռչնամսի՝ 0.3%, բարձր տեսակի ապխտած երշիկի՝ 0.4%, տավարի փափկամսի՝ 0.6%, այլ մսեղենի (խաշի պարագաներ)՝ 0.8%, բաստուրմայի՝ 0.8%, նրբերշիկի՝ 0.9%, ոչխարի և խոզի մսերի՝ 1.2% և 1.5% գնաճ: Միաժամանակ, աղացած մսի գինը նվազել է 0.4%-ով, ենթամսամթերքինը (տավարի լյարդ, սիրտ)՝0.2%-ով, տավարի մսինը՝ 0.1%-ով:

Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի գներն աճել են 0.1-1.3%-ով, իսկ մյուս 5-ում գրանցվել է 1.4-0.1% գնանկում:

[1] *2017թ. հունվարին 2016թ. հունվար և դեկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների և գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:*

Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 0.4%-ով:

2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է այլ մթերքի, ոչ ոգելից խմիչքի, ոգելից խմիչքի և ծխախոտի՝ 0.1% գնաճ: Միաժամանակ, հրուշակեղենի գինը նվազել է 0.2%-ով, իսկ հացամթերքի, ձկնամթերքի, կաթնամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի ապրանքախմբերում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.6% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է կոշկեղենի՝ 3.4%, հագուստի և գործվածքի՝ 1.9% գնանկումով: Կահույքի, կենցաղային էլեկտրաապրանքների գները նշված ժամանակահատվածում նվազել են 0.5%-ով, գորգեղենինը և շինանյութերինը՝ 0.4%-ով, գեղահարդարման ապրանքներինը՝ 0.3%-ով, դեղամիջոցներինը և գրենական պիտույքներինը՝ 0.2%-ով: Դրան զուգընթաց, հանրապետությունում գրանցվել է լվացող միջոցների, մշակույթի, անձնապիտո ապրանքների՝ 0.1%, վառելիքի, խոհանոցային սպասքի՝0.3%, տեքստիլեղենի, ոսկերչական ապրանքների 0.4% գնաճ, իսկ այգեգործական ապրանքների գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 2.2% գնանկում և 0.7% գնաճ: 2017թ. հունվարին 2016թ. հունվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են համապատասխանաբար 16.5% և 16.8%-ով:

Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 1.6-0.2% գնանկում, 3-ում՝ 0.2% գնաճ, իսկ մեկում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.7%-ով:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 0.7% նվազում, ինչը հիմնականում բնակարանային-կոմունալ ծառայությունների՝ 1.8% (կապված բնակչությանը խողովակաշարերով գազային վառելիքի վաճառքի ծառայությունների սակագների 5.2% նվազման հետ), մշակույթի ոլորտի ծառայությունների՝ 0.9% սակագների նվազման արդյունք է: Տրանսպորտի ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 0.6%-ով՝ կապված օդային տրանսպորտով ուղևորների փոխադրավարձի 1.6% նվազման հետ: Դրան զուգընթաց, հանրապետությունում գրանցվել է բուժսպասարկման, հանրային սննդի՝ 0.1%, հանգստի կազմակերպման՝ 6.1% ծառայությունների սակագների հավելաճ, իսկ կենցաղային բնույթի, կապի, կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 1.2-0.6% նվազում, այդ թվում, նվազման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագները նվազել են 0.6%-ով:

Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2016թ. դեկտեմբերի 30-ին, 2017թ. հունվարի 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 10 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2017թ. հունվարին

նախորդ ամսվա նկատմամբ,%



Արտարժույթի շուկա: 2017թ. հունվարին 2016թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 2.6% և 0.6% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժևորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 2.2% և 0.6%: 2017թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 486.01 դրամ, ինչը գրեթե կրկնել է 2016թ. հունվարի համապատասխան ցուցանիշը (486.04 դրամ):

Հավելված 1

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական միջին գները և գների ինդեքսները ՀՀ-ում և Երևան քաղաքում

	Չափի միավորը	***Գների ինդեքսը ՀՀ-ում, %***		*այդ թվում՝*				
		2017թ.		***Քաղաք Երևան***				
		հունվարը		*Միջին գին (դրամ)*			*գների ինդեքս, %*	
		2016թ. դեկտեմբերի նկատմամբ	2016թ. հունվարի նկատմամբ	***2016թ.***		***2017թ.***	*2017թ. հունվարը*	
				Հունվար	*Դեկտեմբեր*	*Հունվար*	2016թ. դեկտեմբերի նկատմամբ	2016թ. հունվարի նկատմամբ
Միրգ, ընդամենը		***110.9***	***119.4***	***x***	***x***	***x***	***109.6***	***117.1***
այդ թվում՝								
Խնձոր	կգ	112.0	146.9	548	767	836	109.1	152.7
Տանձ	“-“	114.6	120.3	1043	1062	1176	110.7	112.8
Խաղող	“-“	106.2	122.9	751	828	846	102.1	112.7
Նուռ	“-“	119.6	103.3	1051	928	1096	118.1	104.2
Արքայանարինջ (կորոլյոկ)	“-“	152.9	114.5	933	672	1025	152.4	109.8
Արևադարձային պտուղ (նարինջ)	“-“	100.0	106.0	548	611	602	98.5	110.0
Մանդարին	“-“	135.6	100.1	689	484	651	134.7	94.6
Կիտրոն	“-“	111.5	89.2	231	180	197	109.8	85.3
Ադամաթուզ (բանան)	“-“	111.0	86.9	1016	799	878	109.8	86.4
Չորացրած մրգեր	“-“	101.1	89.0	5887	5030	5087	101.1	86.4
Չամիչ	“-“	96.1	95.9	1656	1662	1556	93.6	93.9
Ընկույզի միջուկ	“-“	111.9	128.4	5296	6100	7078	116.0	133.6
Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը		***149.0***	***110.6***	***x***	***x***	***x***	***144.8***	***106.5***
այդ թվում՝								
Կաղամբ	կգ	135.5	110.6	134	114	146	128.7	109.5
Լոլիկ	“-“	186.7	97.2	1301	676	1260	186.3	96.9
Վարունգ	“-“	135.4	113.5	1336	1348	1488	110.4	111.4
Գլուխ սոխ	“-“	118.0	87.5	293	215	264	123.0	90.1
Գազար	“-“	120.0	81.2	354	233	274	117.5	77.3
Սեղանի ճակնդեղ	“-“	113.7	113.2	178	192	211	109.6	118.7
Սխտոր	“-“	107.6	145.7	1787	2387	2581	108.1	144.4
Կանաչ սոխ	“-“	218.5	123.4	2689	1372	3154	229.9	117.3
Բողկ	“-“	128.8	82.2	338	205	259	126.3	76.7
Սմբուկ	“-“	163.2	172.7	1673	979	1724	176.1	103.0
Կանաչ պղպեղ	“-“	152.8	98.2	1783	1114	1709	153.5	95.9
Խառը կանաչի	“-“	203.4	144.8	2846	2073	3897	188.0	136.9
Սունկ	“-“	101.1	106.3	1551	1656	1639	99.0	105.6
Կարտոֆիլ	“-“	116.6	90.8	200	152	180	117.8	89.7

Հավելված 2

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում[1]

%

	2015 թ. դեկտեմբերը 2014թ. դեկտեմբերի նկատմամբ	2016թ.												
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	հոկտեմբերը	նոյեմբերը	դեկտեմբերը	դեկտեմբերը 2015թ. դեկտեմբերի նկատմամբ
		նախորդ ամսվա նկատմամբ												
Ավստրիա	101.1	98.9	99.9	101.1	100.1	100.1	100.0	99.5	99.8	101.0	100.4	100.1	100.7	101.6
Բելգիա	101.4	98.3	101.7	100.8	100.2	100.4	100.4	98.9	101.3	99.6	100.4	99.9	100.5	102.2
Բուլղարիա	99.1	99.8	99.5	99.4	99.8	100.0	100.1	101.0	100.0	99.3	99.9	99.9	100.8	99.5
Հունգարիա	101.0	99.9	99.9	100.2	100.8	100.3	100.2	99.8	99.6	100.2	100.6	100.0	100.4	101.8
Գերմանիա	100.2	99.0	100.4	100.8	99.5	100.4	100.1	100.4	99.9	100.0	100.2	100.0	101.0	101.7
Հունաստան	100.4	98.3	100.0	101.1	100.7	100.0	101.3	98.8	100.0	100.7	100.4	98.5	100.4	100.3
Դանիա	100.3	99.5	100.5	100.1	100.2	100.2	100.1	99.9	99.6	100.0	100.3	99.8	100.1	100.3
Իռլանդիա	100.2	99.1	100.4	100.3	100.3	100.5	100.7	99.7	99.8	99.6	99.6	99.9	…	…
Իսպանիա	99.9	97.5	99.6	102.0	100.5	100.5	100.4	98.7	100.0	100.7	100.8	100.2	100.5	101.4
Իտալիա	100.1	97.8	99.6	102.1	100.2	100.3	100.2	98.1	99.9	101.9	100.2	99.8	100.4	100.5
Կիպրոս	99.4	98.6	99.4	100.7	100.4	101.3	100.3	101.0	100.4	99.6	99.1	99.0	100.3	100.1
Լատվիա	100.4	99.3	100.1	100.8	100.4	100.7	100.1	99.7	99.3	100.4	100.6	100.1	100.6	102.1
Լիտվա	99.7	99.6	99.7	101.1	100.7	100.0	100.0	99.2	99.6	100.8	100.5	100.3	100.5	102.0
Լյուքսեմբուրգ	100.9	98.5	101.3	100.1	100.2	100.5	100.4	98.7	101.0	100.3	100.2	100.0	100.4	101.6
Մալթա	101.2	98.4	100.6	101.0	102.6	101.0	101.1	99.9	100.4	99.1	99.0	97.8	100.1	101.0
Նիդերլանդներ	100.5	98.5	100.9	101.5	100.1	100.2	99.5	100.3	100.2	99.6	100.4	99.4	100.2	100.7
Լեհաստան	99.5	99.8	100.0	100.1	100.3	100.2	100.1	99.7	99.8	100.0	100.4	100.0	100.5	100.9
Պորտուգալիա	100.3	98.9	99.5	102.2	100.4	100.4	100.2	99.4	100.0	100.7	100.2	99.0	100.0	100.9
Ռումինիա	99.3	99.4	99.7	100.2	100.0	100.3	99.8	99.8	100.0	99.8	100.5	100.0	100.3	99.9
Սլովակիա	99.5	99.7	100.1	100.0	100.4	99.9	100.1	99.6	99.9	100.0	100.3	100.1	100.1	100.2
Սլովենիա	99.4	98.7	100.0	100.8	100.3	100.8	100.5	99.1	99.9	100.3	100.4	100.1	99.6	100.6
Միացյալ Թագավորություն	100.2	99.2	100.2	100.4	100.1	100.2	100.2	99.9	100.3	100.2	100.1	100.2	100.5	101.6
Ֆինլանդիա	99.7	99.5	100.2	100.5	100.3	99.9	100.1	99.9	100.0	100.2	100.2	100.0	100.3	101.1
Ֆրանսիա	100.3	98.9	100.3	100.8	100.1	100.5	100.1	99.6	100.3	99.8	100.0	100.0	100.3	100.8
Խորվաթիա	99.7	99.6	99.7	100.5	100.4	100.3	100.3	99.9	99.8	100.2	100.1	99.9	100.0	100.7
Չեխիայի Հանրապետություն	99.9	100.6	100.1	100.0	100.6	99.8	100.1	100.4	99.8	99.8	100.2	100.4	100.3	102.1
Շվեդիա	100.7	99.4	100.3	100.5	100.0	100.2	100.1	100.1	99.9	100.2	100.4	100.0	100.5	101.7
Էստոնիա	99.8	99.8	100.8	100.8	100.1	100.4	100.5	100.0	100.1	100.0	99.5	100.0	100.3	102.4
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ -28)[2]	***100.2***	***98.8***	***100.1***	***100.9***	***100.1***	***100.3***	***100.2***	***99.6***	***100.1***	***100.3***	***100.2***	***100.0***	***100.5***	***101.2***
Հայաստան	***99.9***	***102.2***	***98.6***	***99.7***	***99.7***	***99.3***	***99.5***	***97.7***	***99.5***	***100.1***	***100.5***	***101.0***	***101.1***	***98.9***
Ռուսաստան	112.9	101.0	100.6	100.5	100.4	100.4	100.4	100.5	100.0	100.2	100.4	100.4	100.4	105.4
Բելառուս	112.0	101.9	102.9	100.8	100.7	100.5	100.4	100.4	99.9	100.7	100.8	100.8	100.5	110.6
Ուկրաինա	143.3	100.9	99.6	101.0	103.5	100.1	99.8	99.9	99.7	101.8	102.8	101.8	100.9	112.4
Ղազախստան	113.6	101.3	101.1	100.5	100.6	100.5	100.4	100.5	100.2	100.2	100.6	101.2	100.9	108.5
Ղրղզստան	103.4	100.0	99.8	99.0	99.2	100.2	100.0	99.5	99.6	100.2	100.4	100.5	101.0	99.5
Մոլդովա	113.6	100.7	99.5	100.0	100.0	100.2	99.7	99.1	99.6	100.6	101.3	101.2	100.5	102.4
Տաջիկստան	105.0	101.4	100.5	100.2	100.4	100.2	100.3	100.6	100.8	100.4	100.2	100.6	100.4	. . .
Վրաստան	104.9	100.9	100.1	99.7	99.4	99.6	99.1	100.2	100.4	100.3	100.5	100.6	101.0	101.8
Կանադա	101.6	100.2	100.2	100.6	100.3	100.4	100.2	99.8	99.8	100.1	100.2	99.6	99.8	101.5
Նորվեգիա	102.4	100.5	100.6	100.6	100.3	100.4	100.7	100.7	99.3	100.4	100.6	100.3	99.4	103.8
Բրազիլիա	110.7	101.3	100.9	100.4	100.6	100.8	100.3	100.5	100.4	100.1	100.3	100.2	100.3	106.3
Կորեայի Հանրապետություն	101.3	100.0	100.5	99.7	100.1	100.0	100.0	100.1	99.9	100.6	100.1	99.9	100.1	101.3
ԱՄՆ	100.7	100.2	100.1	100.4	100.5	100.4	100.3	99.8	100.1	100.2	100.1	99.8	100.0	102.1
Թուրքիա	108.8	102.0	100.0	100.0	100.6	100.5	100.3	101.2	99.9	100.3	101.6	100.3	…	…
Շվեյցարիա	98.6	99.3	100.2	100.4	100.2	100.1	100.0	99.9	100.0	100.0	100.1	99.7	99.9	99.8

. . . - Տվյալները բացակայում են:

1- Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՀ-ի կայք էջում զետեղված ցուցանիշների հիման վրա:

2- Եվրամիության երկրների համար ներկայացված է միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունվար-փետրվարին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2017 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», նախատեսված է 2017թ. մարտ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 67):